

Սարգիս Գ. Պետրոսյան (Գյումրի)
Պատրվ գիրք դոկտոր

«ԱՐՄԵՆՈՍԻ ԱՌԱՄՊԵԼԻ» ԵՎ ԱՐԱՄԱՆՅԱԿԻ ԱՎԱՆԴԱԶՐՈՒՅՅԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՆՔԸ*

Բանալի բառեր – Արմենոս, Արամանյակ, Անգեղտուն, Հայկ, Չայոնյու, հնագիտություն, Հալաֆյան, Հասունյան, մշակույթ, տեղանուն, ցեղանուն, հացահատիկ, հողագործություն, անասնապահություն, որս:

1. «Արմենոսի առասպելի» հեղինակային և ժողովրդական բաղադրիչների մասին

Հին հույներին քաջ ծանոթ էր Յատնի և Մեդեայի առասպելը, մասնավորապես նրա այն դրվագը, որտեղ խոսվում է Ոսկե գեղմի համար Յատնի՝ դեպի Կողքիս Արգո նավով ձեռնարկած նավարկության մասին¹: Վերջինս հայտնի էր նաև նշանավոր աշխարհագետ Ստրաբոնին, որն ավանդել է մյուս մատենագիրների հաղորդածից առանձնացող մի տարբերակ: Ըստ դրա՝ Յատնի հետ Արգո նավում եղել է նաև թեսալացի Արմենոսը՝ Արմենիա//Հայաստանի անվանադիրը: Ստրաբոնի աշխատության ներքոբերյալ հատվածները քաղել և թարգմանել է Հ. Աճառյանը:

«Ասում են, թե Յատնը՝ Թեսալացի Արմենոսի հետ դեպի Կողքիս նավարկության ժամանակ առաջացել է մինչև Կասպից ծով, և անցել է Վրաստանը, Ադվանքը և Հայաստանի ու Մարաստանի շատ մասը ինչպես վկայում են Յատնականքը և շատ բազմաթիվ հիշատակարաններ» (Strabo, XI, 4, 9):

«Համարում են թե Արաքսը այսպես է կոչված Պենեոս գետի նմանության պատճառով և այս անունը տվել է նրան Արմենոսը... Ասում են թե հնապես Արաքսն էլ Հայաստանում լեռներից իջնելով փովում և ծովանում էր ստորադիր դաշտերում, որովհետև ելք չուներ: Յատնը նմանությամբ Տեմպեի շինել է մի բացվածք, որով այժմ ջուրը հոսում է Կասպից ծով: Սրանով մերկացավ Արաքսեի դաշտավայրը, որով հոսելով գետը հասնում է ջրվեժին» (Strabo, XI, 14, 13):

*Հոդվածն ընդունվել է տպագրության 15.09.2018:
1 Տե՛ս Կուն Ե., Հին Հունաստանի լեգենդներն ու առասպելները, Եր., 1956, էջ 309-351: Парандовский Ян. Мифология. Верования и легенды греков и римлян, М., 1971, с. 178-187; Тахо-Годи А., Греческая мифология, М., 1989, с. 215-220.

Փ (ՃԶ) քաղի, թիվ 3 (63), հայխ-սեպտեմբեր, 2018
ՎՎ համահայկական հանդես

«Ասում են նաև թե Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, որ գտնվում էր Բոյբեիս լճի մոտ Ֆերեսի և Լարիսայի միջև, թե իր հետ եղողներն էլ բնակեցան Ակիլիսենե [=Եկեղիք] և Սուսայիրիտիս [=Սպեր] մինչև Կալաքանե և Ադիաբեն.– սա է, որ իր անունը թողել է Հայաստանին» (**Strabo**, XI, 4, 9):

«Ահա մի հին ավանդություն այս ազգի մասին: Արմենոս՝ Թեսալիայի Արմենիոն քաղաքից, որ գտնվում է Ֆերեսի և Լարիսայի միջև, Բոյբեի վրա, ինչպես ասացինք, Յասոնի հետ արշավեց Հայաստան: Սրա անունով է կոչվում Արմենիա, ինչպես ասում են Փարսալացին Կիրսիլոս և Լարիսացին Մեդիոս՝ երկուսն էլ զինակից Ալեքսանդրի: Նաև թե Արմենոսի հետ եղողները բնակեցան Եկեղիք, որ նախապես Ծովաց տակ էր, մյուսները Սիսայիրիտիսում՝ մինչև Կալաքեն և Ադիաբեն, Հայաստանի սահմաններից դուրս» (**Strabo**, XI, 14, 12)²:

Եթե սա հունական առասպել լիներ, բնականաբար նրանում չէին կարող հիշատակված լինել ո՛չ Արաքսենե դաշտը, որն Արարատյան դաշտն է, ո՛չ Արաքս/Երասխ գետը, ո՛չ էլ Հայաստանի ներքին նահանգներ Սիսայիրիտիսը, Ակիլիսենեն, Կալաքենեն և նրա «սահմաններից դուրս»՝ Միջագետքի հյուսիս-արևելյան անկյունը զբաղեցրած Ադիաբենեն: Բայց եթե սա հունական առասպել չէ, այլ հայկական ավանդագրույց՝ երկրի տարբեր մասերի և նախնյաց հիշատակումով, ապա սրանում ի՞նչ գործ ունեն «թեսալացի Արմենոսը» և Արգոնավորդների առաջնորդ Յասոնը³: Ի տարբերություն թեսալացի սպաներ Կիրսիլոսի և Մեդիոսի ավանդած տարբերակի՝ Արգոնավորդների առասպելի մյուս տարբերակներում հիշատակված և կրկնվող 29 Արգոնավորդների անունների շարքում Արմենոսի անունը բացակայում է⁴: Ըստ երևույթին՝ այն Արգոնավորդների առասպելին չի պատկանել և առասպելում ներդրվել է թեսալացի սպաներ Կիրսիլոսի և Մեդիոսի կողմից: Սրանք հավանաբար իրենց հայրենի Թեսալիայի Արմենիոն/Օրմենիոն քաղաքի հիմնադիր համարված Արմենոս/Օրմենոսի մասին ավանդությունը տարածել են նաև Արմենիայի–Հայաստանի վրա, նրան դարձրել սրա անվանադիրը և, ըստ այդմ, ընդգրկել արգոնավորդների շարքերը:

Այդուհանդերձ, թեսալացի այս սպաները միայն Հայաստանում կարող էին լսել մեր նահանգների անունները, ծանոթանալ Արարատյան դաշտի առաջացման և գետը՝ **Արաքս** անվանելու ավանդություններին և այլ մանրամասների: Ն. Արոնցը իրավացիորեն նկատում էր. «Որ Կիրսիլոսն ու Մեդիոսը Հայաստանում անձամբ են հավաքել այս տեղեկությունները, պետք է դրան հավատալ»⁵: Կարծում ենք, որ նրանք Հայաստանում էլ լսել

2 Տե՛ս **Ստրաբոն**, քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյան (այսուհետև՝ **Ստրաբոն**), Եր., 1940, էջ 33, 61-63: Նշենք, որ հունական **Արմենոս** ("Αρμενος) անձնանունն հայտնի էր նաև իր **Օրմենոս** ("Ορμενος) տարբերակով, իսկ **Արմենիոն** ("Αρμένιον) տեղանունը՝ նաև **Օրմենիոն** ("Ορμένιον) տարբերակով: Այս անունների նախնական ձևերը եղել են **Օրմենիոն**-ն ու **Օրմենիոն**-ը, որովհետև նախ դրանք են գրանցված «Բլիսակնում» (**Hom**, II, XII, 187 և II, 735), ապա **Օրմենոս** անվանաձևը հանդիպում է դեռևս միկենյան դարաշրջանի հունարենում (մ.թ.ա. XV-XII դդ.) վանկազիր o-ro-me-no ձևով («Предметно-понятийный словарь греческого языка. Крито-микенский период», Составили: **В. П. Казанскене, Н.Н. Казанский**, Л., 1986, сс. 94, 98):

3 Ստրաբոնի և Հերոդոտոսի (**Herodot.**, VII, 73) հաղորդումների համադրումով էր հիմք դրվել հայերի բավականյան-փոյուզական ծագման սին տեսությունը:

4 Տե՛ս **Тахо-Годи А.**, Греческая мифология, с. 215-216; **Зайцев А.**, Аргонавты, «Мифология. Золотой фонд. Энциклопедия», М., 2003, с. 56.

5 **Ադոնց Ն.**, Հայաստանի պատմություն, Եր., 1972, էջ 323:

են հայերի նախնի Արամանյակի անունը, որը նման է հնչում ոչ միայն մեր երկրի հունական **Արմենիա** անվանը, այլ նաև թեսալական **Արմենիոն/Օրմենիոն** քաղաքանվանը: Այս «հիմքի» վրա են թեսալացի սպաները իրենց հայրենակցին առնչել Հայաստանին և հայությանը: Ն. Ադոնցը ենթադրում էր, որ թեսալացի երկու սպաները Հայաստան այցելած կարող էին լինել Դիադոքոսների միջև տեղի ունեցած մ.թ.ա. 301 թ. ճակատամարտից առաջ: Նա գրում է. «Անտիգոնոսի կառավարության ընթացքում Հայաստանի թագավորի կողմնորոշումը հայտնի չէ. գուցե, Եվմենեսի օրինակով Անտիգոնոսն ուզեցել է իր կողմը գրավել Արոանդին նախատեսելով 301 թվականի մեծ ճակատամարտը: Այդ նպատակով էլ, գուցե, Հայաստան էր ուղարկել Կիրսիլոսին և Մեդիոսին: Զուտ ենթադրություն, որը բխում է քաղաքական դրությունից»⁶:

Նկատի առնենք, որ եթե թեսալացի այդ սպաները Ն. Ադոնցի նշած ժամանակին լինեին Հայաստանում, դժվար թե իրենց նպատակից դուրս գտնվող տեղեկություններ հավաքելուն կարողանային ժամանակ տրամադրել: Դրա համար ավելի երկար ժամանակ էր պետք: Հավանաբար դա եղել է այն բանից հետո, երբ, Ստրաբոնի հաղորդմամբ (աղբյուրը կարող էին նույն Կիրսիլոսն ու Մեդիոսը լինել), Սիսալիրիտիսի ոսկեհանքը գրավելու համար «ուղարկվեց Մենոնը Ալեքսանդրի կողմից գործով, բայց խեղդամահ եղավ բնակիչների կողմից»⁷: Անկասկած, Ալեքսանդր Մակեդոնացու՝ Հայաստան ուղարկված գորքը ջախջախվել էր, նրա ինչ-որ մասը գերի էր ընկել, որի մեջ եղել էին նաև Մենոն գորավարը (հետագայում մահապատժի ենթարկված) և սպաներ Կիրսիլոսն ու Մեդիոսը: Սրանք իրենց կյանքի որոշ մասն անցկացրել էին Հայաստանում և, ըստ այդմ, հնարավորություններ ունեցել տեղեկություններ հավաքելու մեր երկրի անցյալի մասին:

Եվրոպացի անվանի արևելագետների կարծիքով՝ թեսալացի սպաները Յասոնին Հայաստանին էին առնչել այն պատճառով, որ *Ἰασόνιον* // «Յասոնականք» էին ընկալել սրան մոտ հնչում ունեցած տեղական մի բառ: Ճանաչման էր արժանացել Յ. Մարկվարտի կարծիքը, որ դա եղել է իրանական *yazana* «գոհաբերության վայր» բառը⁸: Այս կարծիքին նախապատվություն տալով հանդերձ՝ Ն. Ադոնցը, նկատի առնելով *yazana*-ում *z*-ի առկայությունը (հին պարսկերեն *d*-ի դիմաց), կարծես կասկածով հավելում է. «մի էական կետ լուսաբանվելու կարիք ունի. ո՞րտեղից է հայերին հասել *yazana*-ն: Արդյո՞ք մեղական փոխառություն է, ուրեմն՝ աքեմենյան տիրապետությունից առաջ»⁹: Արդի արևելագիտության մակարդակը հիմք է տալիս այնդեղու. ո՞չ: Մարական երեքուկես-չորս տասնամյակ տևած կարճատև գերիշխանության ժամանակաշրջանում հայերը չէին հասցնի մարերից փոխառնելու պաշտամունքի ոլորտի որևէ բառ, մանավանդ որ, հին պարսիկների հետ միասին, իրենք՝ մարերը, ևս գտնվում էին Ուրարտուի հզոր մշակույթի ազդեցության տակ¹⁰:

6 Նույնը:

7 Strabo, XI, 14, 9 (Ստրաբոն, էջ 61):

8 Markwart J., Südarmenien und Tigrisquellen nach den griechischen und arabischen Geographen, Wien, 1930, S. 535.

9 Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 319, ծան. 1:

10 Տե՛ս Փրայ Ք., Наследие Ирана, М., 1972, с. 100-102, 108-109, 113, 122-123, 149.

Կարծում ենք, որ հույների կողմից **Յասոն** է ընկալվել հայերեն **Յասոն** բառը, որ քամիներից մեկի¹¹ և հավանաբար այն անձնավորած աստվածության անունն էր: Բանն այն է, որ մինչև բուն Հայաստանին ծանոթանալը հույներին հայտնի էր լինելու սրանից հյուսիս, Սև ծովի հարավային ափին գտնվող այն հրվանդանը, որ հույների հետևությանը «Աշխարհացոյց»-ը կոչում է **Հրուանդան Յասովի**¹²: Կարծում ենք, որ այս դեպքում խոսք է եղել **Յասոն** քանո մասին: Այդ հրվանդանի և Փոքր Հայքի միջև Պարխար (Արևելապոնտական) լեռնաշղթայի արևմտյան մասն էր, իսկ այս լեռնաշղթան հին հայերը համարում էին հյուսիսային քանո օրրանը և այդ քամին լեռնաշղթայի անունով կոչում էին **Պարխարցի**¹³: Այս լեռնաշղթայի և Սև ծովի միջև գտնված այդ նույն տարածքում էին հին հույները նախապես տեղադրում հողմի ռազմիկ աստված Արեսի դուստրերի՝ ամագոնների երկիրը: Սրանց թագուհիներից Պենթեսիլիան՝ մինչև Աքիլեսից սպանվելը, հույների դեմ մարտնչում էր «կատաղի հողմի պես»¹⁴, իսկ մեկ ուրիշ թագուհի՝ Անտիոպեն, գերի էր վերցվել Թեսեսի կողմից¹⁵: Վերջին դեպքի առիթով են հիշատակված ամագոնների Թեմիսկյուրե քաղաքը և Թերմոդոն գետը, որոնցից առաջինը հետագա Թերմե բնակավայրն է, իսկ երկրորդը նրա մոտ Սև ծովը թափվող գետակը¹⁶: Սրանք այն նույն տարածքում են, որտեղ գտնվում էր նաև առասպելական Յասոնի անվանն հարմարեցված, բայց, ամենայն հավանականությամբ, Յասոն քանո անունով կոչված հրվանդանը:

Թեսալացի սպաները նույն կերպ *Ίασόνιον* էին ընկալել **Յասոն** աստծուն ձևոված մեր սրբավայրերի անունները: Հողմի աստվածության պաշտամունքի երբեմնի տարածվածության մասին կարելի է դատել մեր ժողովրդական քրիստոնեության մեջ նրա գործառույթները ժառանգած Ս. Սարգսի վերաբերյալ եղած ավանդություններից¹⁷ և «Սասնա ծռեր» դյուցազնավեպի Ձենով Հովանի հողմաբնույթ կերպարից¹⁸: Ենթադրում ենք, որ այդ պաշտամունքն ակունք էր առել այն հեռավոր դարաշրջանում, երբ հյուսիսային քամին նաև դրական դեր էր կատարել մեր նախնիների կյանքում: Իսկ դա լինելու էր վերջին Սառցապատմանն հաջորդած հազարամյակներում, երբ մեր լեռնաշխարհի կլիման տաք էր ու խոնավ¹⁹, իսկ երբեմն էլ գաղջ՝ սառցադաշտերի նահանջից առաջացած հալոցքային ջրերի կու-

11 «Յասոն, Սուրիայ, Անագոն, Նեսփա, այսոբիկ են, որ շարժունս առնեն, և երկիրք հաստատ լինի վասն երկրի» (**Ալիշան Ղ.**, Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Եր., 2002, էջ 40):

12 Տե՛ս **Երեմյան Ս.**, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի, Եր., 1963, էջ 63, 72 և քարտեզը: **Հրուանդան Յասովի** անունն (հուն. *Ίασονία*՝ *Ίασον*) հայտնի է Քսենոփոնի «Անաբասիս» (VI, II, 1) աշխատությունից, սակայն համարվում է հետագայում կատարված ներմուծում (Քսենոփոն, Անաբասիս, թարգմ. և ծանոթ. Ս. Կրկյաշարյանի, Եր., 1970, էջ 270, ծան. 14):

13 Տե՛ս **Աճառյան Հ.**, Հայերեն արևատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), հատ. IV, Եր., 1979, էջ 62: Տե՛ս նաև **Պետրոսյան Ս.**, Հնդեվրոպական և շումերական հողմի աստծու բնօրրանը, «ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական աշխատություններ» (այսուհետև՝ ՇՀՀԿ գիտ. աշխ.), հատ. XIX, Գյումրի, 2016, էջ 52-61:

14 **Կուն Ն.**, նշվ. աշխ., էջ 478:

15 Տե՛ս նույն տեղում, էջ 277-278:

16 Տե՛ս **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 53 և քարտեզը:

17 Տե՛ս **Ղանալանյան Ա.**, Ավանդապատում, Եր., 1969, էջ 364-368, **Արեղյան Մ.**, Երկեր, Եր., 1975, էջ 78-82:

18 Ձենով Հովանի հողմային բնույթն արտացոլված է նախ և առաջ նրա **Հովան** (հմմտ. **հով**) անվան և **Ձենով** (հմմտ. **ձեն-ձայն**) մականվան մեջ (**Պետրոսյան Ս.**, Դասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, ՀՀ ԳԱԱ ՊԻ, Եր., 2006, էջ 389-393):

19 Տե՛ս **Սարգսյան Ս.**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Եր., 1967, էջ 123-124:

տակման պատճառով:

Եթե «Արմենուսի և իր հետ եղողների» մասին Ստրաբոնի միջոցով մեզ հասած վերոբերյալ տեղեկություններից անշատենք Հայաստանի հետ անմիջական կապ չունեցող սկզբնամասը, ապա մեր ձեռքի տակ կլինի հայոց նախնիների կողմից Հայկական լեռնաշխարհը բնակեցնելու մասին պատմող հնագույն ավանդագրույցի՝ հայ մատենագիրների կողմից չհիշատակված մի դրվագ, որում «Արմենուսի» և «Յասոնի» փոխարեն Արարատյան դաշտը լճացած-ձահձացած ջրերից ազատողը եղել է Արամանյակը: Պատահական չէ, որ այս դերը Յասոնին վերագրելով հանդերձ, Կիրսիլոսն ու Մեդիոսը նորաստեղծ գետի անվանադիր համարում են Արմենուսին: Պատահական չէ նաև, որ Արմավիրի սրբազան տոհմերի պուրակը կրում էր Արամանյակի անունը²⁰: Արարատյան դաշտի տեղում եղած ձահձացած ջրերի երբեմնի գոյության մասին են խոսում ինչպես Մեծամոր (-մեծ-ա-մոր, որում մոր «ձահիժ») գետանունը, այնպես էլ նրա երկրաբանական անցյալը:

Արաքսի հին հուներն ուսումնասիրած Թ. Ավդալբեգյանը նկատել էր տալիս, որ «Արմավիրից Վաղարշապատ ու Արտաշատ տարածված են անընդհատ ձահիժներ, շամբեր, լճակներ...»²¹, իսկ Ս. Սարգսյանը գրում էր. «Արարատյան դաշտի երկարությամբ կային ձահիժներ: Մարդիկ սկսել են բնակվել Արարատյան և Հայաստանի այլ դաշտավայրերում միայն այն ժամանակ, երբ լիովին տիրապետել են նեոլիթյան (նորքարիդարյան – Մ.Պ) տեխնիկային, անցել են ընտանի կենդանիների ընտելացմանը և կուլտուրական բույսերի մշակմանը: Այդ պրոցեսի սկիզբը համընկնում է, ըստ երևույթին, 6-րդ հազարամյակի սկզբին մ.թ.ա.»²²: Ինչպես «Յասոնի» կողմից լճացած ջրերի բացթողման և Արաքս գետի ստեղծման, այնպես էլ «Արմենուսի» կողմից գետի անվանակոչության մասին պատմությունները վերջին Սառցապատմանն հաջորդած հազարամյակների իրավիճակի արձագանքներն են: Այդ ժամանակաշրջանում էր տեղի ունեցել «նորքարիդարյան հեղափոխությունը» և որպես դրա հետևանք հայոց նախնիների տարածումը «Ակիլիսենեում և Սիսպիրիտիսում՝ մինչև Կալաբենե և Ադիաբենե»:

«Արմենուսի և իր հետ եղողների» բնակեցրած տարածքի չորս ծայրամասերից երկուսի՝ Ակիլիսենեի և Ադիաբենեի, տեղադրությունը հստակ է, ուստի բանավեճի առարկա չի դարձել: Այլ է վիճակը մյուս երկուսի դեպքում: Նրանցից Սիսպիրիտիսը կամ համարում են Ճորոխի մեծ ոլորանն ընդգրկած Սպեր գավառը, կամ նույնացնում են սեպագրային Շուրբիայի հետ (ինչպես վարվում են Յ. Մարկվարտը, Ն. Ադոնցը, Հ. Մանանդյանը, Ս. Երեմյանը և ուրիշներ), կամ Հ. Հյուբշմանի նման որոնում են «Հայոց Աղձնիք և Մոկք նահանգներուն սահմանին վրա»²³: Այս տեսակետներից առաջինը Սիսպիրիտիս/Սպեր նույնացումն է ավելի հիմնավոր, որովհետև.

Συσπιριτις-ի հիմքում **Սպեր** տեղանունն է. *Տս-σπερ-ιτ-ις, որում հուն. σπ-// σον հավաքականություն ցույց տվող նախածանց է՝ կցորդված *Σπερ-ιτ

20 Տե՛ս Մովսիսի Խորենացու պատմություն Հայոց (այսուհետև՝ Խորենացի), Եր., 1981, Ա, Ի:

21 Ավդալբեգյան Թ., Հայագիտական հետազոտություններ, Եր., 1969, էջ 97:

22 Սարգսյան Ս., նշվ. աշխ., էջ 123-124:

23 Ստրաբոն, էջ 33, 61-63, 109, 121, Հիւբշման Հ., Հին Հայոց տեղոյ անունները, թարգմ. Հ. Բ. Պիլեգիկձեանի, Վիեննա, 1901, էջ 6, ծան. 3:

«Սպեր-ային» հիմքին, իսկ -ւ-ը ուղղական հոլովի վերջավորությունն է:

Միսպիրիտիսը գտնվելու էր հյուսիսում՝ որպես հակադրություն հարավում գտնվող Ադիաբենեի, որի նման բավականին ընդարձակ էր լինելու, ընդգրկելով Ճորոխի ավազանի մեծ մասը:

Նույնպիսի մոտեցում է դրսևորվել թեսալացի սպաների կողմից նաև Ակիլիսենե-Կալաքենե զույգի նկատմամբ: Սրանցից առաջինը նշում էր հիշատակված տարածքի արևմտյան ծայրամասը՝ Եկեղիքը լայն առումով, իսկ երկրորդը՝ Կալաքենեն, նրան հակադիր արևելյան ծայրամասը: Ըստ այսմ, Կալաքենեն Ասորեստանի հին քաղաքներից մեկի՝ Կալխուի, շրջանի հետ նույնացումը կամ Խարուր ու Մեծ Զար գետերի միջև որոնումը²⁴ անհեռանկարային են թվում, մանավանդ, որ ունենք Հ. Աճառյանի հստակ ցուցումը. Կալաքենեն պետք է փնտրել «Սպերից դեպի արևելք»²⁵: Ի դեպ, Կալաքենեն Ադիաբենեից հարավ գտնվել չէր կարող նաև այն պարզ պատճառով, որ հիշատակված է նրանից առաջ, ոչ թե հետո, ինչպես կլիներ նրանից հարավ գտնվելու դեպքում: Կալաքենեն որպես արևմուտքում գտնվող Ակիլիսենեի հակադիր՝ արևելյան ծայրամաս մեր առաջարկած տեղադրությունը կարելի է ամրապնդել տեղանվանաբանության օգնությամբ:

«Աշխարհացոյց»-ը Մեծ Հայքի հարևանությամբ՝ Կուր գետի ձախ ափին հիշատակում է Աղվանքի **Քաղաղաշտ** գավառը²⁶: Ըստ Ս. Երեմյանի՝ այն ներառել է Աղդաշի և Մինգեչաուրի տափարակ շրջանները, իսկ «կենտրոնը պիտի գտնվեր **Քաղբերդ** ամրոցում, որը հետագայում հայտնի էր Աղբերդ անունով»²⁷ (գավառը կոչվել է նաև **Քալաձոր**՝ իր տարածքով անցնող Կուրի վտակի անունով)²⁸: **Կալաքենե** կարող էր կոչված լինել ավելի վաղ Հայաստանի մաս կազմած Քաղաղաշտ գավառը, որի հայաբնակ լինելն են ապացուցում վերոհիշյալ տեղանունները՝ կազմված հայերեն **խաղ** «ձահիձ» բառի *քաղ//քալ տարբերակի²⁹ և **ղաշտ, բերդ, ձոր** բառերի բարդություններով: Հուն. -ոյ տեղանվանակերտի կցորդումով ստեղծված գրավոր Καλαχνη ձևի հիմքում կարելի է ենթադրել *Քալախ//*Քաղախ նախատիպը: Սրա -ախ տեղանվանակերտ վերջածանցի համար հմնտ. **Արդախ, Արցախ, Բջնախ, Կամախ, Կարծախ, Շատախ, Քաշախ** տեղանունների -ախ բաղադրիչները:

2. Ավանդագրույցի պատմականության բանասիրական փաստարկումը

Արամանյակը ավանդագրույցում հանդես է գալիս որպես հնագույն հայ հասարակության որոշակի դասը ներկայացնող վիպական կերպար: Ի

24 Տե՛ս Արոնց Ն., նշվ. աշխ., էջ 325, Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. I, Եր., 1944, էջ 26:

25 Սարգսոն, էջ 109:

26 Տե՛ս Երեմյան Ս., նշվ. աշխ., էջ 105, 120:

27 Նույն տեղում, էջ 89:

28 Տե՛ս նույն տեղում, էջ 80, 89:

29 Տե՛ս Джаукян Г., Очерки по истории дописменного периода армянского языка, Ер., 1967, с. 109, 143, 201. **Խաղ** «ձահիձ» բառի *քաղ//քալ տարբերակը ծագում է հ.-ե. *kal-«սև, գորշ» արմատից. Հմնտ. հուն. κηλίϛ «սև» (ըստ Հեսիքիոսի), հին հնդկ. kālas «սևագորշ», միջ. Բարձր գերմ. hīlwe «մարգագետին, ձահիձ», հին պլավ. калъ «հեղուկ, կավ, կեղտ» > ոռու. калуга, калужа և Калуга տեղանունը: Ուշագրավ է նաև Քալաձոր գետի ներկայիս թրք. անունը՝ Կարասու «Սև ջուր» (**Պետրոսյան Ս.**, Թրակա-կիմերական էթնիկական տարրը Արարսի ստորին հոսանքի շրջանում, «Պատմա-բանասիրական հանդես», այսուհետև՝ ՊԲՀ, 1979, N 1, էջ 196):

նպաստ հողագործության զարգացման՝ նա աշխատանքներ էր ծավալել ոչ միայն Այրարատում (մասնավորապես Արարատյան դաշտի ազատումը լճացած-ձահձացած ջրերից), այլև Արևմտյան Տիգրիսի ավազանում՝ (մասնավորապես նրա ակունքների սահմանագատումը ստորերկրյա աշխարհի մահաբեր ջրերից): Վերջինիս առթիվ հիշենք շումերների ռազմիկ աստված և միաժամանակ «Էնլիլի հողագործ»՝ Նինուրտա աստծուն վերագրված հետևյալ հոյարարքը: Առասպելի համաձայն՝ նա հաղթել էր և մահացու վիրավորել ահռելի վիշապ Ասագին, որը հասցրել էր թաքնվել ստորերկրյա աշխարհում: Բայց սրա վերջից ժայթքող աղի-լեղի ջրերը, խառնվելով Տիգրիսի ակունքներին, սկսել էին տարածվել բոլոր հովիտներում: Նինուրտան, ժայռաբեկորներ շարտելով (մեր Անգեղեայ Տորքի նման), փակել էր ընդերքային մահաբեր ջրերի ձանապարհը, իսկ ժայթքած ջրերն ուղղել էր դեպի Տիգրիսի հուն³⁰: Քանի որ առասպելում խոսքը Տիգրիսի ակունքների մասին է, ուրեմն, գործ ունենք Տիգրիս գետի նման Շումեր հասած և այնտեղ որոշակի ձևափոխման ենթարկված առասպելի հետ: Հոյարարքի հեղինակը լինելու էր Արևմտյան Տիգրիսի ավազանի (այստեղ էին գետի ակունքները) տեր և տիրակալ Արամանյակը: Որ Արևմտյան Տիգրիսի ավազանը համարվել է Արամանյակի առաջին տիրույթը (երկրորդը Հարքն էր, երրորդը՝ Այրարատը), պարզվում է Անանուն պատմիչի հաղորդումից: Արամանյակի Երկիր Արարադայից Հարք հեռանալուց հետո՝ սերունդներ անց «Եւ տիրէ ի վերայ նոցա Զարեհ որդի որդւոյ **Արամենակայ**, այր զաւրաւոր և կորովի աղեղամբ. ապա Արմոգ. ապա Սարհանգ. ապա Շաւաշ. ապա Փառնաւազ: Սա ծնաւ զԲագամ և զԲագարատ, և Բագարատ ծնաւ զԲիրատ, և Բիրատ ծնաւ զԱսպատ: Եւ որդիքն Բագարատայ ժառանգեցին զժառանգութիւնս իւրեանց ի կողմանս արևմտից. այսինքն է Անգեղ տուն, զոր ի ժամանակին յայնմիկ ազգ բարբարոսացն (իմա՛ հեթանոս հայերը - Ս. Պ.) աստուած կոչեցին»³¹:

Կադմեան նախարարական տոհմը ևս Անգեղտան նախարարական տոհմի նման սերած էր համարվում Արամանյակից: Կադմեայ տունը սեպագրային Kadmuhi-ն է³²: Մովսես Խորենացու և Անանուն պատմիչի հաղորդումների համաձայն՝ տոհմի հիմնադիր Կադմոսը այն ժառանգել էր պապից՝ Հայկ նահապետից: Արևմտյան Տիգրիսի ավազանում Արամանյակի սերունդներից էին Կադմյան և Անգեղտան իշխանական տոհմերը:

Արևմտյան Տիգրիսի ավազանի վաղ հողագործական օջախներից մեկը եղել է Արամանյակի անունը կրկնող սեպագրային Arman- (աքաղ. Armanum, իտթ. Armana) երկիրը: Աքաղի Նարամ-Սուեն թագավորը (մ.թ.ա. 2290-2254 թթ.) իր արձանագրություններում պարծենում է, որ հյուսիսում նվաճել է Արմանում ու Էրլա երկրները և պարտության մատնել Արմանումի արքային³³: Ըստ երևույթին՝ ի նշանավորումն այդ հաղթանակի Դիարբեքիից 25

30 Steu **Афанасьева В.**, Шумерская и аккадская культура, «История древнего мира. Ранняя древность», т. 1, М., 1989, с. 120.

31 Սերէնի եպիսկոպոսի Պատմութիւն (այսուհետև՝ **Սերէնս**), Եր., 1939, Ա, էջ 3:

32 Steu **Дьяконов И.**, Ассиро-вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ), «Вестник древней истории», 1951, N 2-4, надп. NN 3,4,5,7,10,11,12; **Арутюнян Н.**, Топономика Урарту, Ер., 1985, с. 98-99; **Капанцян Г.**, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, с. 256.

33 Հմմտ. **Hrozny В.**, Histoire de Asie Anterieure, Paris, 1947, p. 177-178; **Barton G. A.**, The royal inscriptions of Sumer and Akkad, London, 1929, vol. 1, p. 140-141; **Սովսիսյան Ա.**, Հայաստանը Ք.ա. երրորդ հազարամյակում

կմ հյուսիս-արևելք գտնվող բազալտե մի սալի վրա Նարամ-Սուենը թողել է իր պատկերաքանդակը³⁴: Մեկ այլ արձանագրության մեջ նա խոսում է Ուլիվի երկիր արշավելու մասին: Սա Վ. Խաչատրյանի կարծիքով, խեթ թագավոր Թուդխալիա IV-ի (մ.թ.ա. 1265–1235 թթ.) հիշատակած Uliuanda երկիրն է, որի հետ հիշատակված Armana-ն էլ Նարամ-Սուենի հիշատակած Arman (ուղղ. հոլ. Armanum) երկիրն է³⁵: Ընդ որում, Ulliu/UL(I)iba/Ulluba երկիրը գտնվում էր Արևմտյան Տիգրիսի ձախակողմյան վտակ Բաթմանի վերին հոսանքի շրջանում³⁶, իսկ Armana-ն ընդգրկել է հովտային Ադնիքը և հարավից նրան հարող մի շարք շրջաններ³⁷ (Կադմուխի ներառյալ):

Արամանեակ (ըստ Խորենացու) և **Արամենակ** (ըստ Անանունի) տարբերակներով հայտնի անձնանվան **Արա-** բաղադրիչի հիմքում հ.-ե. *ar- «հերկել, վարել» արմատն է՝ իր երկվանկ արտասանությամբ (ինչպես **արօր** < **արար** բառում է)³⁸: Արմատին հավելված **-ման** / **-մեն** վերջածանցի միջոցով անձնանվան հիմք **Արաման** / **Արամեն** -ը ստացել է «հերկող, հող վարող» իմաստը³⁹: Անձնանվան տարբերակների **-եակ** և **-ակ** բաղադրիչները փաղաքշական վերջածանցներ են. հմմտ. **երանեակ**, **լուսնեակ**, **կորեակ**, **պատանեակ** և **անրակ**, **բռնակ**, **գնդակ**, **դռնակ** բառերի վերջածանցները: Անձնանվան «հերկող, հող վարող» իմաստն է կրկնում քոչվոր ոչխարհապահ քրդերի կողմից հայերին տրված **Ֆրլա** անունը⁴⁰, որն արաբերեն **Ֆելլահ** «հողի մշակ, հողագործ» բառն է: Նույն իմաստն ունի նաև Արևմտյան Տիգրիսի ավազանի ^{KUR}Arman(um) երկրանվան հիմքային Arman-մասը, որով երկրանունը հայտնի էր դարձել վաղ սեպագրերին որպես «Arman (երկիր)» // «հողագործի երկիր»:

Արևմտյան Տիգրիսի ավազանից ալիք առ ալիք հարավ շարժված և հարավի բերրի հողերում հաստատված վաղ հողագործներն ի վերջո հայտնվել էին Միջագետքի տարբեր շրջաններում: Այդ շրջանների տարբեր հանգրվաններից առավել հիմնավորը եղել է Արևմտյան Տիգրիսի ավազանին առավել մոտը՝ հետագա Ատրեստանի տարածքը: Մարդաբանները դրա հետևանքներից մեկն են համարում Ատրեստանի հին բնակչության մեջ հայերին բնորոշ մարդաբանական տիպի՝ արմենոիդի առկայությունը⁴¹: Արժե հիշել նաև Վ. Յակոբսոնի հետևյալ դիտարկումը. «Հետագայում Ատրեստանյան պետության միջուկը կազմած քաղաքները (Նինվե, Աշուր, Արբեյա և այլք)

(ըստ գրավոր աղբյուրների), Եր., 2005, էջ 152:

34 Տես **Авдиев В.**, История древнего Востока, Л., 1953, с. 68.

35 Տես **Хачатрян В.**, Восточные провинции Хеттской империи, «Вопросы топонимики», Ер., 1971, с. 104–106.

36 Տես **Forrer E.**, Die Provinzeinteilung des assurischen Reiches, Leipzig, 1921, S. 85; **Hrozny B.**, Naram-Sin et ses ennemis d'après un texte Hittite, "Archiv orientalny", 1929, vol. I, № 1, p. 65–76; **Арутюнян Н.**, նշվ. աշխ., էջ 205–206:

37 Տես **Хачатрян В.**, նշվ. աշխ., էջ 104–107:

38 ՀԱԲ, հատ. I, Եր., 1971, էջ 350: Հ.-ե. արմատի երկվանկ ու միավանկ (*arə- և *ar-) տարբերակված արտասանություններն են առկա Ուրարտուի արքունի ոստանի Aramalé/Aramali և Armarili/Armarī-jali անուններում, **Արամանեակ** / **Արամենակ** անձնանվան և armen ցեղանվան մեջ, **Արամ** անձնանվան և նրանից բխեցնող **արմէն** / **արմենիկ(ք)** ցեղանուն-երկանվան մեջ: Ջուլգերի երկրորդ տարբերակներում, ինչպես մեկ այլ առիթով Հ. Աճառյան է նկատել տալիս. «միջին օ ընկել է՝ ըստ օրինի» (ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 112):

39 Տես **Պետրոսյան Ս.**, Գասերը և եռադասության դրսևորումները հին Հայաստանում, էջ 177–178, 364–366:

40 Տես **Капанцян Г.**, Историко-лингвистические работы к начальной истории армян, Ер., 1956, с. 175–176:

41 Տես **Խաչատրյան Ա.**, Հայաստանի սեպագրական շրջանի բնական պատմություն, Եր., 1933, էջ 78, ծան. 2: «Արմենոիդ ռասան՝ առաջավորասիական ռասան, որոշ մարդաբանների կողմից առանձնացվում է եվրոպիդ մեծ ռասայի կազմում՝ Հայաստանի, Փոքր Ասիայի հարակից մասի, ինչպես նաև Սիրիայի բնակչության համար. բնորոշ են տղամարդկանց մորուքի փարթամ աճը, կորնթարդ քիթը, տափակ ծոծրակը» (ռուսերենից) «Советский энциклопедический словарь», Изд. четвертое, М., «Советская энциклопедия», 1987, с. 76):

մինչև մ.թ.ա. XV դարը ըստ երևույթին, իրենցից մեկ քաղաքական կամ նույնիսկ էթնիկական միասնություն չէին ներկայացնում»⁴²: Իսկ այս քաղաքներից Նինվե և Արբեղան գտնվում էին «Արմենոսի և իր հետ եղողների» կողմից բնակեցրած Ադիաբենեում:

Ասորեստանի հին մայրաքաղաքը և նրա գերագույն աստվածը կոչվում էին ԱճՏուր (կրկնակի ճՏ-ն շ է և արտասանվում. հմմտ. Teššub//Tešub), այսինքն՝ **Աշուր** կամ **Աշոր**: Ըստ երևույթին, ենթաշերտի ազդեցությամբ այն ուշ է փոխարինվել *ասուր-ի կամ *ասոր-ի (հմմտ. միջ. պարս. Asūristān և հայ. **Ասորեստան**): ԱճՏուր տեղանվան գուգահեռն է առկա Հայկական լեռնաշխարհի ասորեստանյան սեպագրությամբ ավանդված Ašurdāja տեղանվան մեջ, որն Ասորեստանի Թիգլաթփալասար III թագավորը (մ.թ.ա. 744–727 թթ.) բերում է Nal լեռանը մերձ բնակավայրերի անունների շարքում⁴³: Nal/Nala լեռը Հայկական Տավրոսն է, ավելի ձիշտ նրա կենտրոնական հատվածը՝ Սասնա լեռները⁴⁴: ԱճՏուր դիցանվան հետ Ašurdāja տեղանվան Ašur բաղադրիչը լեզվաբանական կապի մեջ լինելով հանդերձ, նրանից չի ծագում, որի համար էլ բերված է առանց դիցանվանական ցուցիչի: Ըստ այսմ, այդ կապը կարող է արգասիքը լինել այս երկու հատուկ անունները ստեղծած մարդկանց՝ հազարամյակների խորքից եկող ազգակցության⁴⁵:

Ašur-dāja հայկական տեղանվան երկրորդ բաղադրիչը ևս բաղադրյալ կազմություն ունի՝ բաղկացած լինելով -ia < h.-ե. *-i(i)ā վերջածանցից և h.-ե. *dā- արմատից: Այս վերջինը մենք նույնական ենք համարում h.-ե. *dē-/*dō- արմատի հետ, որի հայերեն ժառանգորդները հանդես են գալիս **տա-**, **տու-**, **տուր** արմատական ձևերով և «նվեր, պարգև, կաշառք, թագավորական հարկ» իմաստներով⁴⁶: Ašurdāja-ի երկրորդ մասի առումով ուշագրավ է նույնարմատ **տալի** «նվեր, պարգև» բառի իմաստը: Կարծում ենք, որ Աշուրդայան և հետագայում Aššurīqiša կոչված բնակավայրը նույնն է, թեպետև վերջինիս հիմնադիրը լինելու պատիվը Թիգլաթփալասար III-ը իրեն է վերագրում⁴⁷: Բանն այն է, որ վերջին անունը քաղերենում «Աշուրի պարգև» է նշանակում⁴⁸, բայց **Աշուր**-ն այստեղ վերաբերում է արդեն ասորեստանցիների գերագույն աստծուն:

Ինչպես ԱճՏուր տեղանվան (և սրանից ծագած ԱճՏուր//Ասորեստան երկրանվան, ԱճՏուր դիցանվան), այնպես էլ Aššurdāja տեղանվան հիմք *ašur-/*աշոր- բառն առկա է նաև հայերեն **աշորայ**-***աշոր**-այ բառի հիմքում (-այ վերջածանցի համար հմմտ. **արքայ**, **բորայ**, **երայ**, **պախարայ** և այլն): Ըստ Ստ. Մալխասյանցի, **աշորայ** նշանակում է «երկայն, ծայրը սուր, վտիտ, կապտավուն ցորեն, շլել, տարեկան, չավդար» և «հաճար»⁴⁹: Այս բառով նաև ուրիշ հացահատիկային բույսեր են նշել. Վանի նահանգի գյուղերում **աշարա** նշանակում էր «ցորենի նոր ծլած բույսը», Վան քաղաքում «նոր

42 Якобсон В., Месопотамия в XVI-XI вв. до н.э., «История древнего мира. Ранняя древность», т. I, с. 203.

43 Տե՛ս АВИИУ, N 42.

44 Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 98:

45 Տե՛ս Խաչատրյան Ա., նշվ. աշխ., էջ 78, 81-82:

46 Տե՛ս ՀԱԲ, հատ. IV, էջ 357:

47 Տե՛ս Арутюнян Н., Биайнили (Урарту), Ер., 1970, с. 276.

48 Տե՛ս Ադոնց Ն., նշվ. աշխ., էջ 200:

49 Մալխասյանց Ս., Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՀԲԲ), հատ. I, եր., 1944, էջ 198:

ցորեն»⁵⁰:

Արդյոք ռազմական գծերով օժտված ասորեստանցիների գերագույն աստվածը կարող էր նախապես ունենալ «հացահատիկային» բնույթ: Այո՛, բերենք օրինակներ: Հարևան Արապխայում շումերական ընդերքի աստված Ներգալը, որը ռազմիկ աստված էր, նաև բերքատու աստված էր, նրան ձոնված ամիսը հնձի ամիսն էր: Խեթ-խուռական դիցարանում ամպրոպային ռազմիկ Թեշուբի հայրը՝ Կումարբին պաշտվում էր նաև որպես հացահատիկ և, ըստ այդմ, կոչվում «Halki «հատիկ», իսկ զոհաբերությունների ցանկում Թեշուբին զոհաբերվող հացահատիկը ուղղակի նույնացվում էր Ներգալի հետ⁵¹: Ընդ որում, Թեշուբից բացի, խեթերն ունեին ամպրոպաբնույթ մեկ այլ աստվածություն, որը կոչվում էր «Հատիկի Ամպրոպի աստված» (dU.har-ši-har-ši-ia-aš)⁵²: Հայտնի է նաև, որ շումերական Նինգիրսու և Նինուրտա աստվածները պատերազմի աստվածներ լինելով հանդերձ, նաև բուսականության հովանավոր և պտղաբերություն շնորհողներ էին: Ընդ որում, ի նկատի առնելով նրանցից առաջինի «Էնլիլի գերագույն հերկող», իսկ երկրորդի՝ «Էնլիլի հողագործ» մակդիրները, համարում են, որ ավելի հին են նրանց բուսականությանն ու հողագործությանն առնչվող գծերը, քան թե ռազմականը⁵³:

Ուրարտուի գերագույն աստված Խալդին՝ պատերազմում ուրարտական արքաներին առաջնորդողն ու նրանց հաղթանակներ շնորհողը, նաև բուսականության՝ մասնավորապես հացահատիկի և խաղողի աստված էր: Նրա և Աշուր աստծու բուսական հատկանիշների միջև զուգահեռ անցկացրած Ի. Դյակոնովը գրում է. «Խալդիի տունը (իմա՛ գլխավոր տաճարը – Ս.Պ.) Մուծածիրում էր, և այնտեղ նա, իհարկե, արձան ուներ: Ուրիշ տեղերում նա կարող էր ներկայացված լինել միայն պայմանական պաշտամունքային առարկայով՝ ծառով, կոթողով, հնարավոր է գենքով (ինչպես ասորեստանցիները Փոքր Ասիայի առևտրական բնակավայրերում երկրպագում էին միայն Աշուր աստծու դաշույնին կամ ճյուղին)»⁵⁴:

Ինչպես ցույց է տալիս «տարեկան, աշորա» նշանակող **աշարայ** բառը, **աշորայ**-ի հիմքային **աշոր**-ն ունեցել է իր **աշար** տարբերակը: Այս երկու տարբերակներն էլ իրենց արտացոլումն են գտել պատմական Հայաստանի այնպիսի հատուկ անուններում, ինչպիսիք են **Աշարունի**-ք նախարարական տոհմանունը, սրանից ծագած **Արշարունիք** (<Աշարունի-ք) գավառանունը⁵⁵ և վերջինի տարբերակ **Աշորնիք**/**Աշորնէք**-ը⁵⁶: Մեր կարծիքով՝ **աշոր** և **աշար** բառերը կազմված են հնդեվրոպական ծագումով և միմյանց տարբերակ **-որ** և **-ար** վերջածանցներով: Սրանցից առաջինի համար հմնտ. **բեկոր**, **բոլոր**, **մոլոր**, **յորդոր** բառերի վերջածանցները⁵⁷, մանավանդ նույն

50 ՀԱՔ, հատ. I, եր. 1971, էջ 216:

51 Տե՛ս Янковская Н., Ашшур, Митанни, Арранхэ, «История древнего мира. Ранняя древность», т. I, с. 196.

52 Տե՛ս Keilschriftkunden aus Boghazköi (Hf. 1-30, Berlin, 1923-1939), XXV, 23 IV, 45.

53 Տե՛ս Афанасьева К., Нингирсу, «Мифология. Золотой фонд. Энциклопедия», М., 2003, с. 399, Նույնի, Нинурта, նույն տեղում, էջ 400:

54 Дяконов И., К вопросу о символе Халди, «Древний Восток», т. 4., Ер., 1983, с. 191.

55 Տե՛ս Երենյան Ս., նշվ. աշխ., էջ 40:

56 Տե՛ս Մատթեոս Ուռուպեցի, Ժամանակագրություն, Վաղարշապատ, 1898, էջ 269, Ալիշան Ղ., Այրարատ, Վենետիկ, 1890, էջ 56:

57 Տե՛ս Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 235, «Հայոց լեզվի պատմական քերականություն», հատ. II, եր., 1979, էջ 90:

վերջածանցը **աղտոր, գողթոր, խնձոր, խստոր, շլոր, սալոր** բուսանուն-բառերում: Իսկ **աշարայ** բառի **աշար** հիմքում առկա **-ար** վերջածանցն առկա է նաև **մոլար, կերպար, պալար, պատահար, սնար** և այլ բառերում⁵⁸: **Աշոր** և **աշար** հիմքերում առկա ***աշ** արմատի ծագումը դեռևս պարզված չէ, բայց ի նկատի առնելով նրան հավելված **-որ/-ար** վերջածանցների հնդեվրոպական բնույթը⁵⁹, նույնը կարող ենք ենթադրել նաև նրա համար, մասնավորապես որ նա՝ որպես առանձին արմատ և որպես բարդ բառերի բաղադրիչ առկա է հենց հայերենում:

Աշ նշանակում է «հատիկ (ցորենի)», «այուր (գարու)», որից՝ **աշը ուտել, աշը խոշոր** դարձվածքները, իսկ **աշ դնել**՝ «գարու այուրից ու թանից պատրաստված շաղախում կաշին պահել, որպեսզի (վրայի) մագերը թափվեն»⁶⁰: Ենթադրաբար սրանց **աշ** արմատն համարվել է իրանական փոխառություն. հմմտ ավեստ. (զենդ.) *aša* «աղացած»: Արդի պարսկերենն ունի *āš* «այուր, կերակուր», «օսլա» և *āš* «կաշի մշակելու լուծույթ»⁶¹: Թերևս այս երկրորդից փոխառյալ լինի **աշ դնել** բայի **աշ** արմատը, բայց ոչ **աշ** արմատն ընդհանրապես, որովհետև հայերենում նրա ունեցած «ցորենի հատիկ, հացահատիկ» իմաստն ավելի նախնական է, քան իրանական լեզուներում ունեցած նշանակությունները: Բացի դրանից արմատական **աշ**-ը «հատիկ, հացահատիկ» նշանակությամբ պահպանված է հայոց լեզվի Նոր Նախիջևանի բարբառում⁶², իսկ նրանից ածանցյալ **աշան/հաշան** բառը (վերջածանցի համար հմմտ. **բերան, գերան, խորան, ծորան, կռան** բառերը) ուրիշ մի շարք բարբառներում: **Աշան/հաշան** նշանակում է «կալսելու, ծեծելու որպիսի ցորենի կամ գարու խուրձ», որից՝ **հաշան անել** «խուրձերը բանալ, կալի մեջ փռել՝ կալսելու համար, հաշանել, աշնել»⁶³:

Հայերենում **աշ** արմատի բնիկ լինելու մասին են խոսում նաև նրանով կազմված **լաւաշ** և **շաւաշար** բառաբարդերը: **Լաւաշ** < **լաւ-աշ** բառի առաջին բաղադրիչը **լաւ** «լավ, աղել, շահավետ, օգտակար, հաճելի, բարի, ընտիր հատկություններ ունեցող» և այլն բառն է՝ արմատակիցը հուն *λῶϊος* «լավ, շահավետ» բառի⁶⁴: Ուրեմն **լաւաշ** նշանակել է նախ այդպիսի դրական հատկություններ ունեցող ցորենը, ապա՝ նրանից պատրաստված **լավաշ** հացը⁶⁵: **Շաւաշար** (<**շաւ-աշար** < **շաւ-աշ-ար**) նշանակում է «կորեկի, գավարսի տեսակի հացաբույս»⁶⁶: Սրա **շաւ-** բաղադրիչն առկա է նաև **շաւառն** (< **շաւ-ար-ն**) «ցորենի ծղոտը», «արտի մեջ թափված ցորենի նոր տերևներ» բառում⁶⁷, իսկ երկրորդ՝ **աշար**, բաղադրիչը նույնն է **աշարայ** բառի **աշար** հիմքի հետ: Ըստ երևույթին, **շաւաշար** բառի առաջին և երկրորդ բաղադրիչների՝ **շաւ-աշ-**, միասնական ընկալումն է պայմանավորել

58 Տե՛ս նույն էջերում:

59 Տե՛ս **Ջահուկյան Գ.**, նշվ. աշխ., էջ 234-235:

60 ՀԲԲ, հատ. I, էջ 191:

61 «Персидко-русский словарь», т. I, М., 1970, с. 87. Պարսկերենից փոխառյալ է թրք. լեզուների *āš* «կերակուր» բառը:

62 Տե՛ս **Փորքեյան Խ.**, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունները, Եր., 1965, էջ 180:

63 ՀԲԲ, հատ. I, էջ 191, հատ. III, Եր., 1944, էջ 52:

64 Տե՛ս ՀԱԲ, հատ. II, Եր., 1973, էջ 268, ՀԲԲ, հատ. II, Եր., 1944, էջ 187:

65 Անկասկած լավաշին է վերաբերում հայկական հետևյալ առածը. «Գարի հացը ըսավ./-Բացվիմ./ Ցորեն հացը ըսավ./-Շատ մի բացվիր, կոտոխ կը» (**Ղանալանյան Ա.**, Առածանի, Եր., 1960, էջ 21):

66 ՀԱԲ, հատ. III, Եր., 1977, էջ 505: ՀԲԲ, հատ. III, էջ 508:

67 Տե՛ս ՀԱԲ, հատ. III, էջ 505:

Շաւաշ անձնանվան գոյությունը. **Շաւաշ** > **Շաւարշ** (վերջինում «հավելյալ» **ր**-ի համար հմնտ. **Աշարունի** > **Արշարունի**): **Շաւաշ** էր կոչվում Անգեղտան իշխաններից մեկը⁶⁸:

Աշորայ բառի ***աշ** արմատով և **-որ** վերջածանցով հիմքը կրկնող Ասորեստանի հին մայրաքաղաքի և նրա գերագույն աստծու **Աշուր** // ***աշոր** անունը ևս բացահայտում է բնակավայրի հիմնադիրների կապը Հայկական լեռնաշխարհի բնակչության հետ: Իսկ տեղանուն-դիցանվան հնդեվրոպական ծագումը հաստատվում է ինչպես իր ստուգաբանության, այնպես էլ իր հայկական գուգահեռների գոյության միջոցով⁶⁹:

Հայտնի է, որ շումերական քաղաքակրթության հիմնադիրները տափարակ Շումերի բնիկները չէին և այստեղ հայտնվել էին՝ արտագաղթելով բարձրալեռնային մի երկրից: Դրա մասին են խոսում նրանցից շումերներին ժառանգություն մնացած մի շարք իրողություններ: Դրանցից են 1. շումերերենում «լեռ», «երկիր» նշանակող հասկացությունները արտահայտվում էին միևնույն KUR բառով, 2. Շումերի գերագույն աստված Հնլիլը կրում էր «Մեծ լեռ»՝ KUR. GAL մակդիրը, 3. Մարդակերպ ընկալված Հնլիլի կացարանը երկինքն ու երկիրն իրար միացնող «բարձր լեռն էր», 4. Շումերի կրոնական կենտրոն Nibar/Nippur քաղաքի Հնլիլի տաճարը կոչվում էր «Լեռան տուն»՝ E.KUR⁷⁰: 5. Քաղաքի անունը նույնական է Հայկական Տավրոսի և Միջագետքի միջև գտնվող լեռնաշղթայի Nibur/Nipur անվան հետ (այժմ կոչվում է Զուդի, հնում նաև Արարաղ/Արարատ)⁷¹: Ընդ որում, թե քաղաքի և թե լեռնաշղթայի անունների հիմքում հ.-ե. *nebh- արմատն է և -ur վերջածանցը: Վերջինն առկա է նաև հայերեն **բլուր**, **անուր**, **թափուր**, **փշուր**, **շամփուր** և այլ բառերում⁷²: Հ.-ե. *nebh-արմատն են պարունակում հուն. Νέφος «ամպ», լատին. nebula «ամպ, մշուշ», իտեթ. nebiš/nepiš, ավեստ. nabah, ռուս. небо «երկինք» և այլն⁷³ (հիշենք, որ հնդեվրոպական նախալեզվում միևնույն արմատով կարող էին կոչվել ինչպես ամպերն ու ամպակուտուկ լեռները, այնպես էլ երկինքը՝ երկնասլաց լեռների հենարանով): 6. Հնլիլի հայտնի խորհրդանիշ եղջերավոր խույրը ևս կապ ունի նրա լեռ ըմբռնվելու հետ: Հայոց առասպելաբանական պատկերացումներում շատ լեռներ ընկալվել են որպես քարացած եղջերավորներ, որտեղից էլ այսպիսի լեռնանունները ինչպիսիք են **Այծպտկունք**-ը, **Առնոս**-ը, **Արագած**-ը, **Արտոս**-ը, **Պարխար**-ը, **Յլու գլուխ**-ը և այլն:

68 Տես **Սերէնո Ա.**, էջ 6: Ըստ Հ. Աճառյանի, փոխառյալ է իրանական անհայտ *šavarš ձևից (**Աճառյան Հ.**, Հայոց անձնանունների բառարան, հատ. IV, Եր., 1948, էջ 155):

69 Տես **Պետրոսյան Ս.**, Հացագգիների մշակության և պաշտամունքի արտացոլումը Շարայի ավանդաբանությունում, ՊԲՀ, 1981, N 3, էջ 187-192:

70 **Авдиев В.**, История древнего Востока, Л., 1953, с. 105:

71 Տես **Աղոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 71, 125, **Арутюнян Н.**, Топономика Урарту, Ер., 1985, с. 150-151, **Երեմյան Ս.**, նշվ. աշխ., էջ 38:

72 Տես **Պետրոսյան Ս.**, Հայկական լեռնաշխարհի տեղը Հնլիլ և Հնկի աստվածների պաշտամունքում, «Շիրակի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային ութերորդ գիտական նստաշրջանի նյութեր, Գյումրի 22-24 հոկտեմբերի, 2010, Եր., 2010, էջ 61-62:

73 Տես **Гамкрелидзе Т.**, Иванов В., Индоевропейский язык и индоевропейцы, т. II, Тб., 1984, с. 667-668:

3. Ավանդագրույցի պատմականության հնագիտական փաստարկումը

Դեռևս տասնամյակներ առաջ հնագիտությունն ապացուցել էր, որ քաղաքակրթությունն իր առաջին քայլերն արել է հայկական Տավրոսն ընդգրկող այն տարածքում, որտեղ մարդն անցել է «արտադրող տնտեսության» այսինքն՝ մշակովի է դարձել առաջին հացաբույսերը՝ ցորենն ու գարին, և ընտանի դարձրել այժն ու ռչխարը: Հողագործությանն ու անասնապահությանն սկիզբ դրած այդ հայտնագործությունների⁷⁴ հայրենիքը անվանի հնագետ Ռ. Բրեյդվուդն համարում էր հողագործության ծագման և զարգացման համար բարենպաստ պայմաններ ունեցող աշխարհագրական այն գոտին՝ այն «աղեղը», որ կազմում էին Հայկական (Արևելյան) Տավրոս ու Զագրոս լեռնաշղթաներն իրենց նախալեռներով և լեռնամիջյան հովիտներով⁷⁵:

Այս տարածքը կարելի է ավելի սեղմել ի նկատի առնելով հողագործության հետագա զարգացման համար ավելի հարմարավետ աշխատանքային գործիքների հունք ծառայած վանակատի (օբսիդիան) գտնվելու վայրերը: Հայտնի է, որ Միջագետքին հարևան Զագրոսի լեռներում վանակատի հանքեր չկան, որ Միջագետքի հնագույն հողագործները վանակատն ստանում էին Հայկական լեռնաշխարհի հանքերից⁷⁶: Ն. Բադերը նշում է, որ Միջագետքում գործածված կանաչ վանակատի հանքը կարող էր լինել Վանա լճից արևմուտք գտնվող Նեմրուօ հրաբխային լեռան կամ Բինգյուլի հանքը, իսկ գորշ և սև վանակատինը՝ Վանա լճից արևելք (ավելի ճիշտ՝ հյուսիս-արևելք) գտնված շրջանինը⁷⁷: Բնականաբար, այդ հանքերից առաջինը օգտվողները լինելու էին Հայկական լեռնաշխարհի բնակիչները, որոնք բնակվել են նաև Չայոնյու (Չայոնյու թեփեսի) վաղհողագործական բնակատեղիում: Այն գտնվում է պատմական Անգեղտուն գավառում, Դիարբեքի (հնում՝ Ամիդ) քաղաքից հյուսիս-արևմուտք, Էրզանի (հայ. Արկնի) բնակավայրի մոտ⁷⁸:

Հայաստանը հայրենիքն է ինչպես ցորենի, ու գարու վայրի տեսակների, այնպես էլ դրանց մշակաբույսերի վերածված տեսակների⁷⁹: Չայոնյուն մշակովի ցորենի ստացման գործում առաջատարներից էր լինելու: Այստեղ պեղումներից հայտնաբերված մշակովի ցորենի հատիկների թիվը հաշվվում է հազարներով, իսկ գարեհատիկները հատուկենտ են և վայրի տեսակի⁸⁰: Այստեղ վերին շերտերում ցորենի հետ միասին առկա են ոսպի, ոլոռի, վիկի՝ շերտից շերտ շատացող մնացորդներ, ինչը խոսում է մշակա-

74 Տե՛ս **Սարսիրոսյան Հ.**, Գիտությունն սկսվում է նախնադարում, Եր., 1978, էջ 8-9:

75 Տե՛ս **Braidwood R.**, The Near East and Foundation for Civilization, Oregon, 1952, p. 7-10; **Braidwood R.**, Howe B., Prehistoric investigations in Iraqi Kurdistan, "Studies in Ancient Oriental Civilization. The Oriental Institute of the University of Chicago", 1960, vol. 31, p. 34-45.

76 Տե՛ս **Renfrew C., Dixon J. E., Cann J. R.**, Obsidian and Early Cultural Contact in Near East, "Procreate of Prehistoric Society", № 5, vol. XXXII, 1966, p. 30-72.

77 Տե՛ս **Бадер Н.**, Древнейшие земледельцы Северной Месопотамии, М., 1989, с. 107.

78 Չայոնյու «Հուշարձանը գտնվում էր... տարբեր ֆիզիկա-աշխարհագրական գոտիների սահմանին՝ հավասարաչափ հարմար որսով, հավաքչությանը և պարզունակ հողագործությանը զբաղվելու համար» (**Бадер Н.**, նշվ. աշխ., էջ 220):

79 Տե՛ս **Вавилов Н.**, Центры происхождения культурных растений, «Избранные труды», М.-Л., 1965, т. V, с. 88-120, Նույնի, Азия-источник видов, «Наука и жизнь», М., 1968, N 1, с. 98; **Սարդարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 127-129, 130; **Redman Ch.**, The rise of Civilization: From early Farmers to urban society in the Ancient Near East, San Francisco, 1978, p. 153-164.

80 Տե՛ս «Археология Зарубежной Азии», М., 1968, с. 33.

բույսերի ստեղծման գործընթացի արագացման և համայնքի կյանքում ու տնտեսության մեջ հողագործության գերակշռող դառնալու մասին⁸¹:

Բրիչային հողագործությունից անցումը արորայինին նախատեսում էր հողագործության մեջ տղամարդու ներգրավում՝ արորը ֆիզիկական ավելի մեծ ուժի ներդրում էր պահանջում: Առաջին տեղեկությունները արորի մասին պահպանված են մ.թ.ա. V–IV հազարամյակների շումերական արձանագրություններում⁸²: Ադուհանդերձ, Տիգրիսի և Եփրատի գետաբերով տղմոտ ու բերրի հողերով Շումերը դժվար թե լիներ այդ գյուտի հայրենիքը այնպես, ինչպես դա չէր կարող լինել նաև «Նեղոսի պարզև» Եգիպտոսը: Հայկական լեռնաշխարհի բարձրադիր ու կոշտ հողերը մշակելիս, անշուշտ, արորի կարիք էր զգացվելու, որովհետև արորը «նույն բրիչն է, բայց իր կատարելագործությամբ հարմարեցված հողը փխրելուն՝ քաշելու եղանակով, որ կատարվում էր անասուններ կամ մարդիկ լծելով», ուստի «արորը սրածայր ամուր փայտից էր լինում»⁸³: Տափարակ Շումերը արորին հարմար ամրափայտ շինանյութ չունե՞ր՝ եղեգն ու արմավենին պիտանի չէին դրա համար: Ի տարբերություն նրա, Հայկական Տավրոսը՝ իր Անգեղտուն գավառով, այդպիսին ուներ: Մասնավորապես Չայոնյուի շրջակայքը Նոր քարի դարում պատված էր կաղնու և պիստակենու անտառներով⁸⁴:

Չայոնյուի ստորին շերտերին բնորոշ է նաև ընտանի կենդանիների ոսկորների բացակայությունը: Հայտնաբերվածները վայրի տեսակներ են: Սա խոսում է համայնքի գոյության սկզբնական շրջանում որսորդության ունեցած վճռական դերի մասին: Բոլոր շերտերից պեղվել են վարազի, ցուլի, ազնիվ եղջերվի, այծի և ոչխարի ոսկորներ: Բնակավայրի ստորին շերտերից պեղվածները պատկանում են դրանց վայրի տեսակներին: Վերջին շերտերում վիճակն այլ է: Այստեղ այծի և ոչխարի ոսկորները ընտանի տեսակի են, մյուսներինը՝ վայրի: Ընդ որում, եթե ստորին շերտերից պեղված ցուլի և ազնիվ եղջերվի ոսկորների ընդհանուր քանակը կրկնակի գերազանցում է այծերի և ոչխարների (նույնպես վայրի տեսակի) ոսկորների ընդհանուր քանակին, ապա վերին շերտում այծի և ոչխարի (գերազանցապես ընտանի տեսակի) ոսկորների ընդհանուր քանակը 13 անգամ գերազանցում է ցուլի (վայրի տեսակի) և ազնիվ եղջերվի ոսկորների քանակությանը⁸⁵: Չայոնյուի ստորին շերտերում ընտանի կենդանիների ոսկորների բացակայությունը և որսի առարկա կենդանիների ոսկորների առկայությունը խոսում է այն մասին, որ վաղ Չայոնյուի ժամանակաշրջանում դեռևս հողագործական–անասնապահական համալիր տնտեսություն գոյություն չունե՞ր⁸⁶: Այս փաստն է, կարծես, արտացոլում հին հայկական ավանդազրույցը, երբ որպես գործակիցներ է հիշատակում որսորդ նախնի Հայկին⁸⁷ և իր որդի՝ հողագործ Արամանյակին: Ընդ որում, Հայկը ժամանակով առաջ

81 Տե՛ս **Եսայան Ս.**, Հայաստանի հնագիտություն. պրակ 1. Քարի դար–Ուշ Բրոնզի դար, Եր., 1992, էջ 164:

82 Տե՛ս **Семенов С.**, Происхождение земледелия, М., 1974, с. 217.

83 **Սամուելյան Խ.**, Հին Հայաստանի կուլտուրան, հատ. II, Բրոնզե ու վաղագույն երկաթե դար. Նյութական կուլտուրա, Եր., 1941, էջ 48:

84 Տե՛ս **Бадер Н.**, նշվ. աշխ., էջ 219–220:

85 Տե՛ս **Braidwood R.**, Cambel H., Schermer W., Begining of village-farming communities in Southeastern Turkey. Çayönü Tepesi, 1978 an 1979, “Journal of Field Archeology”, 1981, vol. III, p. 256–257; Redman Ch., նշվ. աշխ., էջ 162–164:

86 Տե՛ս **Бадер Н.**, նշվ. աշխ., էջ 225, 255, 271:

87 Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հատ. I, Եր., 1966, էջ 38–45:

է՝ հայրն է, ինչպես էր տնտեսության մեջ որսորդությունը, իսկ Արամանյակը՝ որպես որդի հետնածին է, ինչպես էր հողագործությունը: Ավանդագրույցում Արամանյակի հիշատակումն առանց Հայկի, թվում է, թե մատնանշում է մեր լեռնաշխարհի տնտեսության զարգացման հաջորդ փուլը, երբ եղջերավոր կենդանիների ընտելացման հետևանքով հողագործությունը սկսեց զարգանալ անասնապահության հետ միասնության մեջ՝ ինչը և արորային հողագործության պահանջն էր (ծանր արորն արդեն խոշոր եղջերավոր անասունն էր քաշում):

Արամանյակն առանց Հայկի է հիշատակված Արարատյան դաշտի յուրացման դրվագում: Այս առթիվ արժե վերհիշել Ս. Սարգսյանի այն դիտողությունը, թե այստեղ մեր նախնիները բնակություն են հաստատել միայն մ.թ.ա. VI հազ. սկզբներին, երբ լիովին տիրապետել էին նորքարիդարյան տեխնիկային, ունեին ընտանի կենդանիներ և մշակաբույսեր: Այդ նույն հազարամյակում մեր հողագործ նախնիները յուրացրել են Արարատի մյուս մասերը, իսկ հաջորդ հազարամյակներում նրա հարևան հովտային շրջանները հյուսիսում և արևելքում: Ինչպես Ս. Եսայանն է նշում, դրանցում պեղված «հուշարձաններն իրենց նյութերով հնարավորություն են ընձեռում ճշտելու նաև թվագրական հարցերը. այսպես՝ Շուլավեր-Շոնույթեփե հուշարձանները թվագրվում են մ.թ.ա. 6-5-րդ հազարամյակներով, Նախիջևան-Միլ-Ղարաբաղյանը՝ մ.թ.ա. 5-րդ հազ. վերջին, 4-րդ հազ. առաջին կեսով»⁸⁸: Այդ տարածքի հուշարձանների թաղման տարբեր ձևերի առթիվ Է. Խանգաղյանը գրում է. «վերոհիշյալ թաղման ձևերը Հայկական լեռնաշխարհում ունեն խոր արմատներ: Դամբանաբլուրային տիպի թաղումները սկիզբ են առնում դեռևս մ.թ.ա. V հազարամյակում, որի լավագույն օրինակներից Ստեփանակերտի N 119 և 125 դամբանաբլուրներն են: Այստեղ, ըստ Յա. Գումելի, դամբանաբլուրների ստորին շերտերը տալիս են նեոլիթյան ժամանակաշրջանի մշակույթ: իսկ նրան ծածկող շերտի (2-րդ)... խեցեղենն իր զուգահեռներն ունի մ.թ.ա. IV հազարամյակի մշակույթում: Նույն ժամանակաշրջանով է թվագրվում նաև Ստեփանակերտի N 103 դամբանաբլուրը 48 կմախքով և հասարակ տեքստիլային խեցեղենով»⁸⁹:

Ըստ այսմ՝ տեղական ավանդագրույցներում Արամանյակի սերունդներն են համարվել ոչ միայն Հայկական լեռնաշխարհի գրեթե ամբողջ հյուսիսարևելյան կեսի⁹⁰, այլ նաև ավելի արևելք ընկած շրջանների բնակիչները: Ավանդագրույցների համաձայն՝ Արամանյակի (արաբ հեղինակների երկերում՝ Արման/Արմինի) որդիների կառուցած քաղաքների թվում են եղել այնպիսի հանրահայտները ինչպիսիք էին Արամայիսի կառուցած Արմավիրը Արարատյան դաշտում⁹¹, Բայլականի հիմնադրած նույնանուն քաղաքը Միլի դաշտում և Արդաբիլի հիմնադրած նույնանուն քաղաքը հյուսիսարևելյան Ատրպատականում⁹²: Արևելքում հայկական էթնիկական տարրի հիմնադրած հողագործական բնակատեղիների երբեմնի գոյությունը հաստատում են նաև վերևում բերված **Քաղաղաշտ**, **Քաղբերդ**, **Քալաձոր** տեղանուն-

88 Եսայան Ս., Հայաստանի հնագիտություն, պրակ 1, Քարի դար-Ուշ բրոնզի դար, Եր., 1992, էջ 96:

89 Խանգաղյան Է., Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում, Եր., 1967, էջ 31:

90 Տե՛ս Խորենացի, Ա, Ժբ, Բ, ք:

91 Տե՛ս Խորենացի, Ա, Ժա:

92 Տե՛ս «Արարական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին», Եր., 1965, էջ 15, 40:

ները իրենց բացահայտ հայկական ստուգաբանություններով: Իսկ դրանք գտնվում էին «Արմենոսի և իր հետ եղողների» բնակեցրած տարածքի արևելյան եզրին՝ Կալաքենեում:

Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի Հասունյան (մ.թ.ա. VII-VI հազ.) և Հալաֆյան (մ.թ.ա. VI -V հազ.) մշակույթներ ունեցող բնակատեղիների միջև առկա են բազմաթիվ ընդհանրություններ: Ուշագրավ են հատկապես Չայոնյուից և Ջերել-Սինջարի շրջանի Մագգալիայից հայտնաբերված կայծքարե նետասլաքների, վանակատե ինքնատիպ մանգաղների⁹³ և սառը կոփման եղանակով պատրաստված հերունների միջև եղած ակնբախ ընդհանրությունները, երբ Թել Մագգալիան գտնվում է Չայոնյուից շուրջ 600 կմ հեռավորության վրա՝ հարավում: Ընդ որում, Չայոնյուն հիմնադրվել է մ.թ.ա. IX-VIII հազարամյակների սահմանագլխին, իսկ Մագգալիան VII հազարամյակի բնակատեղի է⁹⁴:

Հիշյալ երկու բնակատեղիների ընդհանրություններին անդրադարձած հնագետ Ն. Բադերը եզրակացնում է. «Այդ ամենը թույլ է տալիս Չայոնյուն և Մագգալիայում տեսնել երկու մոտ, թերևս ազգակից ցեղախմբերի բնակավայրեր, որոնց միջև շփումները ամրապնդվում էին հումքի փոխանակության ընթացքում»⁹⁵: Հարյուրավոր կիլոմետրերով իրարից հեռու գտնվող հայկական և միջագետքյան այս բնակավայրերի բնակիչները ազգակիցներ կարող էին լինել, եթե Չայոնյուի հին բնակիչների մի մասը ժամանակին արտագաղթել էր և հիմնադրել ինչպես Մագգալիան, այնպես էլ Գրիթիլեն, Ջեֆեր-հյույուքը, Շիմշարան և այլն⁹⁶: Մեր լեռնաշխարհից Միջագետք իջած այդ ցեղերը հազարամյակներ շարունակ պահպանել են կապը իրենց նախահայրենիքի բնակիչների հետ: Դրա անհերքելի ապացույցը հայկական վանակատից պատրաստված աշխատանքային գործիքների հայտնաբերումն է Հյուսիսային Միջագետքի հնավայրերի նորքարիդարյան շերտերից:

Մետաղագործությանը վերաբերող առաջին գտածոները նույնպես Չայոնյուից են: Հնավայրից մոտ 20 կմ հեռավորության վրա են Էրգանիի հանրահայտ պղնձահանքերը ներկայիս Մադենի մոտ: Հնավայրի ստորին շերտերից պեղվել են պղնձից և դահանակից (մալախիտ) պատրաստված շուրջ 40 առարկաներ՝ մախաթներ, ասեղներ, հերուններ, ուլունքներ և կախազարդեր, որոնց ռադիոածխածնային թվագրումը 7250-6750 թթ. միջև է⁹⁷: Չայոնյուի պղնձե առարկաները պատրաստված են սառը կոփման եղանակով՝ գրեթե անխառն (99%) պղնձից⁹⁸: Միջագետքի Հալաֆյան և Ուբեյդյան մշակույթներին վերաբերող շերտերից հայտնաբերվել են հայկական

93 Չայոնյուն եղել է գեյքերի ու գործիքների պատրաստման մեջ վանակատն օգտագործող առաջիններից մեկը, եթե ոչ ամենաառաջինը: Հուշարձանի շերտերում հետզհետե ավելանում է վանակատից պատրաստվածների թիվը՝ վերին շերտերում հասնելով մինչ այդ գերակշռող կայծքարից պատրաստվածների քանակին (Oates J., The background and early farming communities in the Mesopotamia and the Zagros, "Proceedings of the prehistoric Society", 1975, vol. 39, p. 150):

94 Տե՛ս **Бадер Н.**, նշվ. աշխ., էջ 229-230:

95 Նույն տեղում, էջ 231:

96 Տե՛ս **Mortensen P.**, Tell Shimshara: The Hassuna period Kobenhavn, 1970, p. 139-144; **Рындина Н., Яхонтова Л.**, Медное шило из Телья Марзалии (Итоги химико-технологического исследования), **Бадер Н.**, նշվ. աշխ., Приложение 5, с. 302-311.

97 Տե՛ս **Braidwood R.**, The early village in Southwestern Asia, "Journal of the Near Eastern Studies", Chicago, vol. 32, N 1-2, p. 37. Համեմատության համար նշենք, որ Փոքր Ասիայից Իրան ձգված տարածքում մետաղամշակության յուրացումը տեղի է ունեցել մ.թ.ա. 5500-5000 թթ. միջև (**Mellaart J.**, նշվ. աշխ., էջ 45):

98 Տե՛ս **Рындина Н., Яхонтова Л.**, նշվ. աշխ., էջ 310:

պղնձից պատրաստված բազմաթիվ աշխատանքային գործիքներ, զենքեր և պերճանքի առարկաներ: Դրանք նախ հայտնվել են Միջագետքի Հայկական լեռնաշխարհին հարող շրջաններում, ապա՝ ավելի ու ավելի հարավ ընկած վայրերում, պայմանավորված լինելով նոր բերրի հողերի յուրացման համար դեպի հարավ ընթացած ցեղային տեղաշարժերով:

Այսպիսով, հնագիտությունը հավաստում է, որ Արևմտյան Տիգրիսի ավազանից և շրջակայքից դեպի հարավ շարժված «Հասունյան ցեղերը հիմնովին յուրացնում են Հյուսիսային Միջագետքի շրջանները և իջնում են հարավ՝ ընդհուպ մինչև Ժամանակակից Բաղդադի շրջանը (Թեղ էս-Սավվան, Սամառա)»⁹⁹: Զ. Մելարթը պատմական **Միջագետք հայոց**-ում (նրա ձևակերպումով՝ թրքական Միջագետք)՝ Դիարբեքիր և Մարդին (հնում՝ Մարդէ բերդ) քաղաքների միջև է դնում Հասունյան, ենթադրաբար նաև Հալաֆյան՝ նրանից ծագած, մշակույթի կենտրոնը¹⁰⁰: Ընդ որում, նա շեշտում է, որ Միջագետքի Հալաֆյան մշակույթը հյուսիսից եկած մարդկանց մշակույթ է, որ «նրա հարավային սահմանները բավականին հստակ որոշվում են, իսկ հյուսիսայինները, հավանաբար, հասնում էին Տավրոս (իմա՝ Հայկական Տավրոս – Ս. Պ.) լեռներ, հյուսիսում՝ առանձին տեղերում անցնելով բարձրավանդակ (իմա՝ Հայկական բարձրավանդակ – Ս. Պ.)»¹⁰¹:

Վերջին դեպքում հնագետը ի նկատի էր առնում հավանաբար, Հալաֆյան մշակույթի հուշարձանը Դիարբեքիրի շրջանում՝ այդ մշակույթին բնորոշ շրջանաձև հատակագիծ ունեցող կացարան-շինություններով և նախշագարդ խեցեղենով¹⁰², ինչպես նաև Թիլքի-թեփեն (Շամիրամալտի) Վանա լճի հարավ-արևելյան ափից ոչ հեռու: Ըստ Ս. Եսայանի, սրա «ստորին շերտերի նյութերը թվագրվում են մ.թ.ա. 5-րդ հազ. և հանդիսանում են Հալաֆյան մշակույթի արևելյան տարբերակը»¹⁰³:

Եզրափակիչ խոսքը տանք Զ. Մելարթի երկի ռուսերեն թարգմանության մեկնաբանությունների հեղինակ, մշակութաբան Ե. Անտոնովային. «Հալաֆյան մշակույթի հուշարձանների կապը հյուսիսի հետ հիմք է տալիս ենթադրելու, որ դրանց բնակիչները ծագումով կարող էին լինել նախալեռնային շրջաններից, որոնք ստիպված իջել են հարթավայր, որպեսզի ավելի հաջողությամբ զբաղվեն հողագործությամբ և անասնապահությամբ: Իրենց մշակույթում և հատկապես ճարտարապետության մեջ նրանք պահպանել էին անտառապատ լեռների բնակիչներին բնորոշ գծեր»¹⁰⁴:

Հալաֆյան մշակույթի և նրա տարբերակների հուշարձաններից հայտնաբերվել են ոչ միայն Հյուսիսային Միջագետքում և Հայկական լեռնաշխարհում, այլև վերջինիս հարող Այսրկովկասի, Փոքր Ասիայի, Ատրիքի և հյուսիս-արևմտյան Իրանի մի շարք շրջաններում¹⁰⁵: Հալաֆյան հնագիտական մշակույթի սահմանների այդպիսի ընդարձակումը Զ. Մելարթին հա-

99 «История древнего Востока», под ред. В. И. Кузищина, М., 1979, с. 113.

100 Տե՛ս **Меллаарт Дж.**, Древнейшие цивилизации Ближнего Востока, М., 1982, с. 65-66.

101 Նույն տեղում:

102 Տե՛ս **Braidwood R.**, Cambel H., Watson P. J., Prehistoric investigations in South-Eastern Turkey, "Science", 13 June, 1969, vol. 164, p. 1275-1276.

103 **Եսայան Ս.**, նշվ. աշխ., էջ 79:

104 **Антонова Е.**, Комментарий «Меллаарт», նշվ. աշխ., էջ 138:

105 Տե՛ս **Мунчаев Р.**, Кавказ на заре Бронзового века. Неолит, Энеолит, Ранняя бронза, М., 1975, с. 77-79, **Եսայան Ս.**, նշվ. աշխ., էջ 78-82:

մարում էր «արտադրող տնտեսության» առաջացմանն հաջորդած մեծ արտագաղթերից մեկի հետևանք: Ըստ այդմ՝ «Հյուսիսային Միջագետքում Հալաֆյան մշակույթի զարգացման հետ միաժամանակ շարունակվում է ցեղերի առաջխաղացումը հարավ, որտեղ ձևավորվեցին հնագույն բնակատեղիներ Էրեդուում, Ուրում, Ուրուկում»¹⁰⁶: Սրանք վաղագույն Շումերում են:



Այսպիսով, «Արմենոսի առապելի»՝ Հայաստանին վերաբերող մասը պետք է համարել Արամանյակի ավանդագրույցի՝ մեր մատենագիրներին անհայտ մնացած դրվագների հեղինակային որոշակի միջամտությամբ կատարված վերարտադրություն: Դրանք և մեր մատենագիրների ավանդած դրվագները միասին բանահյուսական արտացոլումներն են պատմական այն իրադարձությունների, որոնք հանգեցրին «Նորքարիդարյան հեղափոխությունն» սկսած մեր նախնիների կողմից Հայկական լեռնաշխարհի և Միջագետքի առանձին շրջանների տնտեսական ու էթնիկական յուրացմանը:

Մարգիս Գ. Պետրոսյան – Ավելի քան 130 գիտական հրապարակումների և 2 մենագրության հեղինակ է: Գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է հայ ժողովրդի ծագման ու կազմավորման, Հայկական լեռնաշխարհում դասերի առաջացման խնդիրները, հայ և հնդեվրոպական մյուս ժողովուրդների հնագույն պատմությանը, բանահյուսությանը, մասնավորապես, առապելաբանությանը վերաբերող հարցերը:

¹⁰⁶ «История древнего Востока», под ред. В. И. Кузичина, с. 113.

Summary

THE HISTORICAL BASIS OF THE “MYTH OF ARMENOSE” AND OF THE LEGEND ABOUT ARAMANYAK

Sargis G. Petrosyan

Key words – Armenos, Aramanyak, Angeltun, Hayk, Chayonyou, Archaeology, Halafian, Hassunian, culture, toponym, ethnonym, grain, husbandry, cattle breeding, hunting.

According to Strabo, companions of the legendary ancestor and the eponym of the Armenians, i.e. Armenos, once settled down partly in Sispiritis, partly in Qalakhene and others—outside of the Armenian highland—in Adiabene (in the North-East of Mesopotamia). Until now there has been no genuine comparative-historical approach in assessing the information about Thessaly Argonaut Armenos. The theme of Armenos, in our opinion, is inseparably linked with the Armenian ancient stories about Aramanyak, which is connected both with the origin of husbandry and the ancient Armenian ethnos. The fact is that the Indo-European husbandry tribes played a dominant role in the formation of the ancient Armenian ethnic community. Ancient Armenian stories mention that Hayk, ethnarch of the Armenians, after the birth of his elder son Aramanyak, goes to the land of Ararad.

At the end of the VIII Millennium BC in the basin of the Western Tigr is the culture of the first settled down farmers and cattle breeders was formed. Within this region, at the foothills of the Armenian Tavros in the future Armenian district Angeltun the early agricultural settlement of Chayonyou is situated. The excavations of Chayonyou revealed poly residues of cultivated plants—wheat, peas, lentils and vetch.

Резюме

ИСТОРИЧЕСКАЯ ОСНОВА “ЛЕГЕНДЫ ОБ АРМЕНОСЕ” И СКАЗАНИИ ОБ АРАМАНЯКЕ

Саргис Г. Петросян

Ключевые слова – Арменос, Араманяк, Ангелтун, Айка, Чайоню, археология, халафская культура, хассунская культура, топоним, этноним, зерно, земледелие, скотоводство, охота.

По сообщению Страбона, спутники легендарного предка и эпонима армян – Арменоса, когда-то осели частью в Сиспиритисе, частью в Калахене, а другие – вне Армянского нагорья – на северо-востоке Месопотамии, в Адиабене. До сих пор отсутствовал подлинно сравнительно-исторический подход

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՏԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՊՏԱԿԱՆԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ, 2018
Ժ (Ճ-Ձ) քաղաքի, թիվ 3 (63), հայկա-սկսպրկերի, 2018

ՀՀԿ հասնահայկալիան հայերեն

в оценке сообщений об аргонавте фессалийце Арменосе. Тема об Арменосе, по нашему мнению, в своей основе неразрывно связана с древними армянскими преданиями об Арамаянке, значит и с происхождением земледелия, а также с происхождением древнеармянского этноса. Дело в том, что индоевропейские земледельческие племена играли доминирующую роль в формировании древнеармянского этноса. Древнеармянские предания говорят, что Айк, прародитель армян, после рождения своего старшего сына Арамаянка отправляется в землю Арада.

В конце VIII тысячелетия до н. э. в бассейне Западного Тигра образовалась культура первых оседлых земледельцев и скотоводов. В пределах этой области, в предгорье Армянского Тавра, в будущем древнеармянском уезде Ангелтун, находится раннеземледельческое поселение Чайнон. Раскопки его обнаружили большое число остатков культурной растительности – одомашненные сорта пшеницы, гороха, чечевицы и вики.

R E F E R E N C E S

1. **Kun. N.**, Hin Hunastani legendern u araspelnery, Yer., 1956 (In Armenian).
2. **Parandovskiy Y.**, Mifologiya. Verovaniya i legendi grekov i rimlyan, M., 1971 (In Russian).
3. **Takho-Godi A.**, grecheskaya mifologiya, M., 1989 (In Russian).
4. **Strabon**, Qaghets yev targmanets H. Acharyan, Yer., 1940, (In Armenian).
“Predmetno-ponyatiyniy slovar grecheskogo yazika. Krito-mikenskiy period”, sostavili: V.P. Kazanskene, N.N. Kazanskiy, Len., 1986 (In Russian).
5. **Zaytsev A.**, Argonavti, “Mifologiya. Zolotoy fond. Entsiklopedia”, M., 2003 (In Russian).
6. **Adonts N.**, Hayastani patmutyun, Yer., 1972, (In Armenian).
7. **Fray R.**, Naslediye Irana, M., 1972, (In Russian).
8. **Alishan Gh.**, hayots hin havaty kam hetanosakan krony, Yer., 2002 (In Armenian).
9. **Xenophon**, Anabasis, targm. yev tsanot. S. Krkyasharyani, Yer., 1970 (In Armenian).
10. **Yeremyan S.**, Hayastany yst “Ashkharhatsuyts”-i, Yer., 1963 (In Armenian).
Acharyan H., hayeren armatakan bararan, vol. I, Yer., 1971, vol. II, Yer., 1973, vol. III, Yer. 1977, vol. IV, Yer. 1979 (In Armenian).
11. **Petrosyan S.**, Hndyevropakan yev shumerakan hoghmi asttsu bnorrany, GAA Shiraki hayagitakan hetazotutyunneri kentroni “Gitakan ashkhatutyunner”, h. XIX, Gyumri, 2016 (In Armenian).
12. **Ghanalanyan A.**, Avandapatum, Yer. 1969 (In Armenian).
13. **Petrosyan S.**, Dasery yev yeradasutyan drsevorunnery hin Hayastanum, Yer., 2006 (In Armenian).
14. **Sardaryan S.**, Nakhnadaryan hasarakutyuny Hayastanum, Yer., 1967 (In Armenian).
15. Movsisi Khornacvoy Patmutyunn Hayots, Yer., 1981 (In Armenian).
16. **Avdalbekyan T.**, Hayagitakan hetazotutyunner, Yer., 1969 (In Armenian).
17. **Hyubshman H.**, Hin hayots teghvoy anunnery, targm. H.B. Pilezikchyan, Vienna,

- 1901 (In Armenian).
18. **Manandyan H.**, Qnnakan tesutyun hay zhoghovrdi patmutyan, h. I, Yer., 1944 (In Armenian).
 19. **Jahukyan G.**, Ocherki po istorii dopismennogo perioda armyanskogo yazika, Yer., 1967 (In Russian).
 20. **Petrosyan S.**, Traka-kimerakan etnikakan tarry Araqsi storin hosanqi shrjanum, “Patma-banasirakan handes”, 1979, N 1 (In Armenian).
 21. **Afanasyeva V.**, Shumerskaya i akkadszkaya kultura, “Istoriya drevnego mira. Rannyaya drevnost”, vol. I, M., 1989 (In Russian).
 22. Sebeosi episkoposi Patmutyun, Yer., 1939 (In Armenian).
 23. **Dyakonov I.**, Assiro-vavilonskiye istochniki po istorii Urartu, “Vestnik drevney istorii”, 1951, NN 2-4 (In Russian).
 24. **Arutyunyan N.**, Toponimika Urartu, Yer., 1985 (In Russian).
 25. **Kapantsyan G.**, Istoriko-lingvisticheskie raboti k nachalnoy istorii armyan, Yer., 1956 (In Russian).
 26. “Bargirq hayots”, qnnakan bnagiry, arajabany yev tsanotagrutyunnery H. Amalyani, Yer., 1975 (In Armenian).
 27. **Jahukyan G.**, hayots lezvi patmutyun: nakhagrayin shrjan, Yer., 1987 (In Armenian).
 28. **Gamkrelidze T.**, Ivanov V., Indoyevropeyskiy yazik i indoyevropeytsi, vol. I-II, Tb., 1984 (In Russian).
 29. **Avdiev V.**, Istoriya drevnego Vostoka, Len., 1953 (In Russian).
 30. “Hayots lezvi patmakan qerakanutyun”, vol. II, Yer., 1979 (In Armenian).
 31. **Petrosyan S.**, hatsazgineri mshakutyun yev pashtamunqi artatsolumy Sharayi avandazruytsum, “PBH”, 1981, N 3 (In Armenian).
 32. **Khachatryan A.**, Hayastani sepagrakan shrjani qnnakan patmutyun, Yer., 1933 (In Armenian).
 33. **Yakobson V.**, Mesopotamia v XVI-XI v.v. do n. e., “Istoriya drevnego mira. Rannyaya drevnost”, vol. I, M., 1989 (In Russian).
 34. **Arutyunyan N.**, Biaynili (Urartu), Yer., 1970 (In Russian).
 35. **Malkhasyants S.**, Hayeren batsatrakan bararan, vol. I-III, Yer., 1944 (In Armenian).
 36. **Yankovskaya N.**, Ashshur, Mitanni, Arapkhe, “istoriya drevnego mira. Rannyaya drevnost”, vol. I, M., 1989 (In Russian).
 37. **Afanasyeva K.**, Ningirsu, “Mifologiya. Zolotoy fond. Entsiklopediya”, M., 2003; Ninurta, ibid (In Russian).
 38. **Dyakonov I.**, K voprosu o simvole Khaldi, “Drevniy Vostok”, vol. 4, Yer., 1983 (In Russian).
 39. **Matteos Urhayetsi**, Zhamanakagrutyun, Vagharshapat, 1898 (In Armenian).
 40. **Alishan Gh.**, Ayrarat, Venetik, 1890 (In Armenian).
 41. “Persidsko-russkiy slovar”, vol. I, M., 1970 (In Russian).
 42. **Porksheyan Kh.**, Nor Nakhijevani hay zhoghovrdakan banahyusutyuny, Yer., 1965 (In Armenian).
 43. **Ghanalanyan A.**, Aratsani, Yer., 1960 (In Armenian).
 44. **Petrosyan S.**, Haykakan lernashkharhi teghy Enlil yev Enki astvatsneri pashtamunqum, “Shiraki patmamshakutayin zharangutyun”, VIII, Yer. 2010 (In Armenian).

- nian).
45. **Martirosyan H.**, Gitutyunn sksvum e nakhnadarum, Yer., 1978 (In Armenian).
 46. **Bader N.**, Drevneyshie zemledeltsi Severnoy Mesopotamii, M., 1989 (In Russian).
 47. **Vavilov N.**, Tsentri proiskhozhdeniya kulturnikh rasteniy, "Izbrannie trudi", M.–Len., 1965, t. V (In Russian).
 48. **Vavilov N.**, Aziya–istochnik vidov, "nauka i zhizn", M., 1968, N 1 (In Russian).
 49. "Arkheologiya Zarubezhnoy Azii", M., 1968 (In Russian).
 50. **Yesayan S.**, Hayastani hnagitutyun, prak 1, Qari dar – Ush Bronzi dar, Yer., 1992 (In Armenian).
 51. **Semyonov S.**, Proiskhozhdenie zemledeliya, M., 1974 (In Russian).
 52. **Samuelyan Kh.**, Hin Hayastani kulturan, vol. II, Bronze yev vaghaguyn Yerkate dar. Nyutakan kultura, Yer., 1941 (In Armenian).
 53. **Abeghyan M.**, Yerker, vol. I, Yer., 1966 (In Armenian).
 54. "Arabakan aghbyurnery Hayastani yev harevan yerkrneri masin", Yer., 1965 (In Armenian).
 55. "Istoriya drevnego Vostoka", pod. red. V. I. Kuzishchina, M., 1979 (In Russian).
 56. **Rindina N., Yakhontova L.**, Mednoe shilo iz Tell Magzalii, "Bader N", Prilozhenie 5 (In Russian).
 57. **Mellaart J.**, Drevneyshie tsivilizatsii Blizhnego Vostoka, M., 1982 (In Russian).
 58. **Antonov Y.**, Kommentariy "Mellaart" (In Russian).
 59. **Munchaev R.**, Kavkaz na zare Bronzovogo veka. Neolit, Eneolit, Rannyaya Bronza, M., 1975 (In Russian).
 60. **Petrosyan S.**, Hayots mehenagrutyan akunqnerum (gitakan hodvatsneri zhoghovatsu), Gyumri, 2008 (In Armenian).